



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՅՈՒՄԻԱՍԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐՊԵՍ ԱՂԵԱՏՈՒԹՅԱՆ
ՆԿԱԶԵՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅԴԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ՝
ԾՐԱԳԻՐ (OFDNA)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՈՎԱԾ

ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հիմնական դրույթներ

«Օրգանական գյուղատնտեսության զարգացումը Հայաստանի հյուսիսային համայնքներում որպես աղքատության նվազեցման և կենսաբազմազանության պահպանության խթան (OFDNA)» ծրագրի շրջանակներում հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ «Լավագույն գյուղատնտեսական ծրագրերի գաղափարների մրցույթ» անվանմամբ: Մրցույթը իրականացվելու Հայաստանի երեք մարզերի (Գեղարքունիք, Լոռի, Տավուշ) 32 ներկայացված գյուղերում:

Դրամաշնորհային մրցույթի նպատակն է նպաստել բնական ռեսուրսների (հողի, ջրի, կենսաբազմազանության) կայուն օգտագործման:

Կոոպերատիվներին տրվող դրամաշնորհի չափը կարող է լինել առավելագույնը՝ 1.000.000 դրամ:

Դրամաշնորհին դիմելու վերջնաժամկետն է՝ **01 սեպտեմբերի 2022**, (դիմել մինչև 18:00 (GMT+4)): Ծրագրերը կքննարկվեն դիմում-հայտերը ստանալուց հետո:



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
 ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
 ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ
 ԼՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ
 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
 ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ՝
 ԾՐԱԳԻՐ (OFDNA)

Միջույթի մեջ ընդգրկված են միայն հետևյալ գյուղերը՝

Գեղարքունիք

Անտառամեջ
 Այգուտ
 Դարաբակ

Կալվան- Բարեպատ
 Ձորավանք

Տավուշ

Բերքաբեր
 Չինչին
 Հովք
 Աղավնավանք
 Դիտավան

Իծաքար
 Նավուր
 Տավուշ
 Լուսահովիտ

Լոռի

Աթան
 Բովաձոր
 Ձորագյուղ
 Հազվի
 Հոբարձի
 Զարաբերդ
 Զարինջ
 Կարմիր Աղեկ
 Լեջան

Լոռի Բերդ
 Լորուտ
 Մարց
 Պրիվոլնոյե
 Շամուտ
 Ծաթեր
 Ուրուտ
 Պուշկին
 Ծաղկաշատ



Մասնակիցներին տրվող պահանջները

- Մրցույթին կարող են մասնակցել միայն կոոպերատիվներ (ինչպես ծրագրի շրջանակում ստեղծված կոոպերատիվները, այնպես էլ ծրագրային գյուղերում գործող կոոպերատիվներ)
- Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել համապատասխան դիմում-հայտը ամբողջությամբ և միայն հայատառ, կցել բոլոր պահանջվող փաստաթղթերը,
- Մեկ կոոպերատիվը կարող է ներկայացնել միայն մեկ ծրագիր,
- Ներկայացվող ծրագիրը պետք է իրականանա միայն վերը նշված գյուղերում և ապահովի տվյալ գյուղի զարգացումը, ռեսուրսների կայուն օգտագործումը,
- Դրամաշնորհում հաղթելու դեպքում, մասնակիցը պարտավորվում է ունենալ անձնական ներդրում դրամաշնորհից ստացված գումարի հարյուր տոկոսի չափով (ներկայացվող ծրագրի բյուջեյի 50 տոկոսը տրամադրվում է դրամաշնորհի կողմից, իսկ մասնակցի կողմից պետք է տրամադրվի մյուս 50 տոկոսը կամ ավել),
- Հաղթող մասնակիցները պարտավորվում են կնքել աշխատանքների իրականացման պայմանագիր,
- Մրցույթին չեն կարող մասնակցել գործող օրենսդրությամբ սահմանափակումներ ունեցողները (լուծարում, սնկացում և այլն):



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐԴԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ
ՆԿԱՉԵՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ՝
ՆՐԱԳԻՐ (OFDNA)

Գնահատման չափանիշներ

Դրամաշնորհային ծրագրերը գնահատվելու են ըստ հետևյալ չափանիշների՝

- Մոտիվացիա
- Ստացվող արտադրանքը և քանակները
- Առանձնահատկությունը
- Փորձ
- Կարճաժամկետ ազդեցություն
- Երկարաժամկետ ազդեցություն
- Ծրագրի ազդեցությունը համայնքային / գյուղական զարգացմանը
- Բյուջե
- Ռիսկեր
- Ծրագրի ազդեցությունը բնական ռեսուրսների կայուն օգտագործման և պահպանության վրա
- Ծրագրի ազդեցությունը շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանության վրա

Դիմում-հայտ

Դիմում-հայտը և բյուջեն պետք է լրացված լինեն ամբողջությամբ, միայն հայատառ, և կցված լինեն բոլոր պահանջվող փաստաթղթերը:

Կիսատ կամ կեղծ ներկայացված հայտերը չեն դիտարկվի մրցույթի շրջանակներում:



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐՊԵՍ ԱՂԵԱՏՈՒԹՅԱՆ
ՆԿԱԶԵՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ՝
ՆՐԱԳԻՐ (OFDNA)

Եզրափակիչ դրույթներ

Հաղթող մասնակիցներին ընտրելուց անմիջապես հետո, նրանց հետ կկնքվի աշխատանքների իրականացման պայմանագիր: Գումարը կփոխանցվի նրանց հաշվին իրականացվող աշխատանքներին համապատասխան: Ամբողջ ծրագրի իրականացման ընթացքում տեղի են ունենալու ստուգիչ այցեր: Մասնակիցները պարտավոր են լինելու, ամբողջ ծրագրի ընթացքում, ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ:

Ժյուրին կարող է փոփոխություններ իրականացնել բյուջեյում՝ փոխել դրամաշնորհից ստացվելիք գումարի չափը, կախված ներկայացված ծրագրից:

Մրցույթի բոլոր հաղթողները կստանան անհրաժեշտ խորհուրդներ տրամադրված միջոցների հետ աշխատելու կանոնների և ընթացակարգերի, ինչպես նաև նախագծի հաշվետվությունների պատրաստման վերաբերյալ:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (+374) 44 599949 հեռախոսահամարով, կամ կապ հաստատել մեզ հետ bestidea@nabu.am էլ.հասցեով:

Մաղթում ենք հաջողություն